ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
15.05.2024 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
1.2 ՀՎՀՀ-ն		02221006
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ՇԱՀԱՄԻՐՅԱՆՆԵՐԻ ՓՈՂ. 22
1.4 Պետական գրանցման համարը		211.171.02520
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1992-06-12
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91404585
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.bfa.am
1.8 Էլեկտրոնային փոստը		arm.basketball@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՀՐԱՉՅԱ	ՌՈՍՏՈՄՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Հայաստանի Հանրապետությունան ողջ տարածքում բասկետբոլ մարզաձևի զարգացմանը նպաստելը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջ ապրելակերպի քարոզումը		
Բասկետբոլի բարձր որակավորում ունեցող մարզիչների և մարզիկների պատրաստման համակարգումը		
Օլիմպիական խաղերին, բասկետբոլի Եվրոպայի և աշխարհի առաջնություններին, խմբային փուլերին, միջազգային մրցաշարերին, գավաթներին Հայաստանի բասկետբոլի հավաքական թիմերի մասնակցության ապահովումը		
Օտարերկրյա բասկետբոլի ազգային ֆեդերացիաների, բասկետբոլի միջազգային ֆեդերացիայի, ինչպես նաև սփյուռքի և այլ միջազգային կազմակերպությունների, ասոցիացիաների հետ մարզական և գործնական կապերի հաստատումը, ամրապնդումը և ընդլայնումը		
Բասկետբոլ մարզաձևի մարզիկների, մարզիչների, մրցավարների, և այլ մասնագետների սոցիալական և այլ իրավունքների ներկայացումը, սոցիալական վիճակի բարելավումը, խրախուսման միջոցների կիրառումը, բասկետբոլի վետերանների ու հաշմանդամների նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորումը		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		165
4.2 Կամավորների թիվը		140
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		3

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Նրա աշխարհ նրա կանոններ աղջիկների բասկետբոլի զարգացման ծրագիր	Երևան	Բասկետբոլի մասսայականացում	Ավարտված
2	YDF մանկապատանեկան բասկետբոլի զարգացման ծրագիր	Երևան	Բասկետբոլի զարգացում	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները

1	Պատանիների Հայաստանի 2022-2023 թթ մինչև 12,13, 14 , 16 տարեկանների առաջնություններ	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	Տարբեր մարզաձևերից ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
2	Աղջիկների Հայաստանի 2022-2023 թթ մինչև 14, 16 տարեկանների առաջնություններ	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	Տարբեր մարզաձևերից ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
3	Պատանիների Հայաստանի 2023-2024 թթ մինչև 12, 14 , 16 տարեկանների առաջնություններ	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	Տարբեր մարզաձևերից ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
4	Աղջիկների Հայաստանի 2023-2024 թթ մինչև 12, 14, 16 տարեկանների առաջնություններ	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	Տարբեր մարզաձևերից ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
5	Կանանց բասկետբոլի բարձրագույն խմբի առաջնություն, շրջան 5-րդ	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
6	Մ24 Տղամարդկանց ՀՀ առաջնություն, 1-2 շրջաններ	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
7	Եվրոպայի մինչև 16 տարեկան կանանց առաջնություն	Անդորրա	Ավարտված	Միջազգային մրցաշարերին ՀՀ մարզիկների մասնակցություն	Վարկանիշային միավորների բարելավում
8	Եվրոպայի մինչև 16 տարեկան տղամարդկանց առաջնություն	Կոսովո	Ավարտված	Միջազգային մրցաշարերին ՀՀ մարզիկների մասնակցություն	Վարկանիշային միավորների բարելավում
9	Եվրոպայի մինչև 18 տարեկան կանանց առաջնություն	Ալբանիա	Ավարտված	Միջազգային մրցաշարերին ՀՀ մարզիկների մասնակցություն	Վարկանիշային միավորների բարելավում
10	Ուսումնամարզական հավաք մինչև 18 տարեկան կանանց Եվրոպայի առաջնությունից առաջ	Երևան	Ավարտված	Միջազգային մրցաշարերին ՀՀ մարզիկների մասնակցության նախապատրաստում	Վարկանիշային միավորների բարելավում
11	Ուսումնամարզական հավաք մինչև 16 տարեկան կանանց Եվրոպայի առաջնությունից առաջ	Երևան	Ավարտված	Միջազգային մրցաշարերին ՀՀ մարզիկների մասնակցության նախապատրաստում	Վարկանիշային միավորների բարելավում
12	Ուսումնամարզական հավաք մինչև 16 տարեկան տղամարդկանց Եվրոպայի առաջնությունից առաջ	Երևան	Ավարտված	Միջազգային մրցաշարերին ՀՀ մարզիկների մասնակցության նախապատրաստում	Վարկանիշային միավորների բարելավում
13	Եվրոթրիփ Հայաստան 2023	Երևան	Ավարտված	Միջազգային փորձի ներգրավում: Բարձրացնել հայ բասկետբոլիստների վարպետության մակարդակի բարձրացում	Բասկետբոլի մասսայականացում Հայաստանում
14	Ուսումնամարզական հավաք Հայաստանի ազգային հավաքական	Երևան	Ավարտված	Հավաքական թիմի պատրաստվածության բարելավում:	Մարզիկների վարպետության բարձրացում
15	2023թ. 3 3 տղամարդկանց ՀՀ առաջնություն, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ շրջաններ	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում

16	2023թ. Տղամարդկանց Հայաստանի մինչև 18 տարեկանների առաջնություն	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
17	2023թ. Տղամարդկանց բարձրագույն խմբի առաջնություն, 1-ին և 2-րդ փուլեր	Երևան	Ավարտված	ՀՀ առաջնություններին մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
18	Ուսումնամարզական հավաք,ընկերական հանդիպումներ Հայաստանի ազգային հավաքական	ԱՄՆ	Ավարտված	Միջազգային մրցաշարերին ՀՀ մարզիկների մասնակցություն	Մարզիկների վարպետության բարձրացում
19	2023թ. ՖԻԲԱ Եվրոպա միջազգային կոնֆերանս	Գերմանիա	Ավարտված	Միջազգային կոնֆերանսին մասնակցություն	Միջազգային ֆեդերացիայի հետ կապերի հաստատում
20	2023թ Հայաստանի հավաքականների մասնագիտական մարզահագուստ	Երևան	Ավարտված	Հայաստանի հավաքականների մասնագիտական մարզահագուստի ապահովում	Մարզիկների ներկայացուցչություն
21	ՀՀ հավաքական թիմերի մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետության բարձրացման նպատակով վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովում	Երևան	Ավարտված	վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովում	դրական

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	154,701,893
8.2 Գույքը	
Ընդամենը	0

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	103,876,700	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	103,876,700	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	148,690,186
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		148,690,186

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	103,015,900
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		103,015,900

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

860.800 դրամ տնտեսում վերադարձվել է պետ բյուջե:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____4_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրություն, անունը, ազգանուն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ)՝ 2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները:

Մեր կարծիքով, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության կից ներկայացված հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 15.05.2024թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICE" 00419022

Որակավորված աուդիտոր՝ Գայանե Թովմասյան

ՀՀ, ք.Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

Digitally signed by
Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.05.2024 12:56